



Տեսարան Սևանա կղզուց



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ահանա լճի ավազանի հյուսիսարևմտյան, հարավարևմտյան և հարավարևելյան մասերում են ընկած ներկայիս Ահանի, Կամոյի (նախկին Նոր Բայաղետ), Մարտունու և Վարդենիսի (նախկին Բասարգեշար) շրջանները, որոնք մտնում էին պատմական Այունյաց աշխարհի Գեղարքունիք և Սոգք գավառների կազմում: Տվյալ շրջանների հայկական հոծ աղգարնակչության հիմնական կազմը սերում է 1827—28 թթ. ոռուս-թուրքական սլաաների հետևանքով Արևմտյան Հայաստանի այլևայլ վայրերից և Պարսկաստանի հայաբնակ գավառներից դանգվածաբար Արևելյան Հայաստան գաղթած հայերից, որոնք պատկանում էին աղղագրական տարբեր խմբերի, իրենց սոցիալ-բարրառային խայտաբղետ բաղմադանություններով:

Այդ աղղագրական տարբեր խմբերի ընավորություն և հոգեբանության, ինչպես նաև բարրառային ու խոսվածքային բաղմադանությունը շատ կողմերով պահպանվում է և այսօր Վարդենիսի շրջանի 35 դուղերից հայաբնակ են 6-ը՝ Ակունք, Կարճաղբուր, Նոբակերտ, Մովակ, Զիլակլու, Յարփղու, իսկ 5 դուղեր ունեն հայ և աղղաբնակ խառն բնակչություն:

Շրջանի հայությունը խոսում է Մշո, Խլաթի, Կարնո, Վանի, Բիթլիսի, Ռշտունիքի, Երզնկայի, Բայաղետի, Դիազինի բարրառային ու խոսվածքներով:

Մարտունու շրջանի խոսվածքների մասին առաջին տեղեկությունը հաղորդում է Հր. Աճառյանը, տակավին 1911 թ.: «Վերջին երկու ոռուս-տաճկական պատերազմներու ժամանակ,—գրում է նա,— Մուշեն և Ալաշկերտեն երկու խումբ մեծ գաղթականություն ղուրս գալով՝ հաստատվեցավ Երևանի նահանգը, այն է՝ Ասլարան, Նոր Բայաղետի հարավային կողմերը՝ Սահանա լճին եզերքներուն վրա»:

¹ Հր. Աճառյան, Հայ բարրառայինություն էԱԺԸ, Մոսկվա, Նոր Նախիչևան, 1911, էջ 112:

Ներկայումս Մարտունու շրջանն ունի 19 դուղ, ուր դերիշխողը Ալաշկերտի ենթաբարրառային է, խոսում են նաև Մշո բարրառային, Զիլանի, Համոկանի, Դուզաղի, Թոփրաղ կալեի, Մանղասարի խոսվածքներով:

Կամոյի շրջանն ունի 14 բնակավայր, որոնցից չորսի (Արծվաքար, Հացառատ, Բատիկյան, Կարմիր) բնակիչները նախկին հինրայագետցիներ են և լավ պահպանել են մայրենի խոսվածքը: Կան գյուղեր, որոնց բնակչության հիմնական մասը Ալաշկերտից, Ասլմասուից, Խոյից եկած վերաբնակիչների շառավիղներն են:

Սահանի շրջանի աղղագրական կազմը թեպետ հիմնականում բաղկացած է XIX դ. առաջին քառորդին Մակուից տեղահանված հայ աղղաբնակչությունից, այնուհանգերեք մի քանի գյուղերում կան նաև Մուշից, Ալաշկերտից, Խլաթից, Բիթլիսից, Բասենից, Խոյից եկած վերաբնակիչներ:

Շրջանում կան 12 բնակավայրեր, մեկ բնավան և մեկ քաղաք: Որոշ բնակավայրերում հայերն ապրում են ոռուսների և աղղաբնակների հետ խառն, իսկ Ահան քաղաքում հայ աղղաբնակչությունը հավաքված է տարբեր գյուղերից և խոսում է տարբեր բարրառայիններով:

Գեղարքունիքի հայ բնակչության աղղագրական և բարրառային խայտաբղետ բաղմադանությունը իր նկատելի կնիքն է պրել նրա հոգևոր մշակույթի, մասնավորապես բանահյուսության վրա, որն աչքի է ընկնում ժանրային ու ոճաբարրառային լեզուսպեսություններով, նյութերի առատություններով, բնաշխարհիկ և տեղականի, ընդհանրիկ:

Գեղարքունիքի (Սահանի ավազան) կազմի մեջ մտնող Կրասնոսելսկի շրջանի աղղաբնակչությունը կազմված է հիմնականում Ղարաբաղի, Շամշադինի, Արզահանի և Կարսի հայ վերաբնակիչներից, որոնք իրենց աղղագրական և բարրառային յուրօրինակություններով առանձնանում են, ուստի և լեն ընդգրկվել սույն ժողովածուում:

² Լ. Ն. Բաղրամյան, Հայերեն բարրառային, Սահանա լճի ավազանի խոսվածքները, Երևան, 1972:

և եկամտի, նորի և ավանդականի փոխադրեցութեամբ և փոխմիաձուլմամբ:

Տարիներ շարունակ զրադվելով Գեղարքունիքի հյուսիսարևմտյան և հարավարևելյան շրջաններ (Սևան, Կամո, Մարտունի, Վարգենիս) հայ բանահյուսության նյութերի գրառմամբ (տե՛ս քաղտեղը), հիմնականում նպատակ ենք ունեցել ժամանակի կորստից փրկել տվյալ տեղավայրի հայ աղգարնակչության բանավոր ավանդության մեջ տակավին գոյատևող հտրուստ և ընդամենը ստեղծագործությունները, միաժամանակ փորձել ենք պարզել ազգագրական տարրեր խմբերի բանահյուսական ավանդապահության աստիճանը, գրառված նյութերի բանահյուսական որակը, կապված աշխարհագրական որոշակի տեղաշարժերի հետ: Ընսասացների սեռատարիքային հասկանիշներն ու գրանց կապը սոցիալ-պատմական ու հոգեբանական որոշ խրնգիրների հետ:

Այս խնգիրները շոշափելիս և գրառված նյութերը արխիվավորելիս առաջնորդվել ենք բանասիրական գիտությունների գոկաոր Ի. Գ. Լեինի հայ բանահյուսական արխիվի վերլուծական վավերագրման համար մշակած և այժմ կիրառվող կոգավորման համակարգից և քանակական վերլուծումների եղանակից:

Հիմք է ընգունված Լեինի առաջագրած հարցաթերթիկը, որի տասը կետից մենք նախընտրեցինք առաջին վեցը.

- ա. Որտե՞ղ է պահվում նյութը (ֆոնգի համարը)
- բ. նյութի գրառման վայրը և ծագումը
- գ. Ե՞րբ է գրառված (աարթիվը)
- դ. Ումի՞ց է գրառված (ասացողի սեռը՝ ք—կին, տ—աղամարդ և աարիքը)
- ե. Գրառողը՝ բանահավաքը, սեռը և աարիքը

Ն. Ի՞նչ է գրառված՝ ժանրը

Ասացողի տարիքը	Խումբը
8—15	1
16—20	2
21—29	3
30—39	4
40—49	5
50—59	6
60—69	7
70—79	8
80—	9

Գրառված ըոլոր նյութերը պահվում են ԳԱ հնագիտության և աղգագրության ինստիտուտի հայ ժողովրգական բանահյուսության արխիվի

FG ֆոնդում (Ռոդա Գրիգորյանի ֆոնգ), № 0001—6080 համարակալման տակ:

Բանահյուսական և ազգագրական յուրաքանչյուր միավոր մշակված է և քարտագրված. քարտերի ընգհանուր թիվը 4273 է. որից բանահյուսականը 3000, իսկ մնացյալ 1273—ը ազգագրական և լեղվական նյութերն են: Գրառված տեքստերը մշակելիս պարզվեց, որ քարտագրված և ֆոնգ են հանձնված հետևյալ նյութերը (տե՛ս աղ. № 1):

Հավաքված նյութերի ըագմաժանրայնության այս պակերը պայմանավորված է հավաքչական աշխատանքի ընգհանուր և կալուն սկզբունքով, այն է՝ գրառել և կորստից փրկել ըոլոր ժանրերի ստեղծագործությունները:

Ինչպես երևում է № 1 աղյուսակի տվյալներից, ազգագրական վերոհիշյալ խմբերից գրանցված ժողովրգագիտական նյութերի մեջ ազգագրությունը փոքր քանակ է կաղում (FG 5695. 5763): Պատճաոր եղել է ոչ թե ազգագրական նյութերի սակավությունն այգ շրջաններում, այլ բանահավաքի առավել որոշակի նպատակազրումը: Մեր նպատակն է եղել գրառել սոսկ ժողովրգական բանահյուսությունը և անգրագարծել ենք աղգագրական նյութերին այնքանով, որքանով գրանք առնչվել են բանահյուսական որոշակի ստեղծագործությունների հետ կամ ունեցել են ընգհանուր ժողովրգագիտական արժեք: Մեսերն, օրինակ, գրառվել են այն ղեպքում, երր գրանք կապված են եղել որոշ աեսակի երգերի (հարսանեկան, սգո) հետ, կամ ինչ-որ շափով մեկնաբանել բանահյուսական նյութերի կիրառական-կենցաղային հասկանիշները: Հավատարիքներին համեմատաբար առավել նշանակալից աեղ ենք հատկացրել, քանղի գրանք հավասարապես ունեն թե՛ բանահյուսական և թե՛ աղգագրական արժեք:

Ժողովրգագիտական նյութերի գրառման ընթացքում մենք հատուկ ուշադրություն ենք գարծել, թե ասացողը ումի՞ց է յսել, սովորել, որտեղի՞ց, ի՞նչ, ճանապարհով են այս նյութերը հասել մինչև մեր օրերը: Բաղմարնույթ ասացողների մեծագույն մասը առաջագրված այգ հարցին պատասխանում էր. «մեր ջոշերից, պապերից, հանցըվորներից ենք լսած», «պապըս կըսեր,—ասում է Մարտունու շրջանի ըղմաշնորհ բանասաց 96-ամյա Գեղամ Ավեախյանը,—էա պատմութեններ լսած ա սանախեր Սրբեյից հլա Մանկասար՝ ապրած ժամանակ...», կամ, մեկ այլ ասացող, գարծյալ Մարտունու շրջանից, վիպա-

* Աւաշկերտի գյուղերից:

Նյութի տեսակը		Գրառված նյութերն ըստ տարեթվերի							Ընդամենը	— 1977
		1971	1972	1973	1974	1975	1976	1977		
Ժող. բժշկ.	F 6.2.2	10	24	11	8	32	15	—	100	2.3
Գերբ. գիտելիք	F 6.4.0	2	7	5	13	—	18	15	60	1.4
Դեկոր. և շար. ոգիներ	F 6.4.2	—	2	4	—	3	1	—	10	0.2
Սուրբ մարդիկ	F 6.4.4	1	1	—	—	3	—	1	6	0.1
Սուրբ իրեր և նշաններ	F 6.4.5	10	5	8	10	10	3	4	50	1.2
Սուրբ արարողություններ	F 6.5.3	3	—	3	3	—	—	4	13	0.3
Բառային ֆունկցիա	F 7.0.2	101	105	98	116	53	97	96	666	15.6
Բանաձևեր	P 7.1.0	1	3	—	4	2	—	—	10	0.2
Մաղթանք, օրհնանք	F 7.1.3	5	4	—	20	11	8	18	66	1.5
Աղոթք	F 7.1.4	—	—	4	—	3	2	1	10	0.2
Անեծք	F 7.1.5	29	—	41	35	46	26	33	210	4.9
Պատմական րանաձևեր	F 7.1.8	15	19	14	17	14	—	32	111	2.6
Պատմական վերջարաններ	F 7.1.9	10	7	6	11	8	13	10	65	1.5
Առած-ասացվածքներ	F 7.2.1	103	91	87	68	123	69	59	600	14.0
Խրատ	F 7.2.4	—	3	2	—	10	—	—	15	0.3
Շուտասանություն	F 7.2.5	1	—	2	—	3	2	2	10	0.2
Դարձվածներ	F 7.2.8	67	133	161	135	149	118	127	890	20.8
Հանելուկներ	F 7.3.0	15	27	31	4	16	12	45	150	3.5
Հիմար հանելուկներ	F 7.3.1	2	—	7	—	—	1	—	10	0.2
Հուշապատում	F 8.1	—	—	—	—	—	2	2	4	0.1
Ավանդություններ	F 8.2	1	1	1	1	3	—	1	8	0.2
Առակներ	F 8.3	5	9	7	5	11	6	7	50	1.2
Հեքիաթներ	F 8.4	11	15	9	19	8	16	2	80	1.9
Սիրավեպ	F 8.5	—	2	—	3	—	—	—	6	0.1
Սասնա ծռեր	F 9.1.6	2	—	—	—	3	2	—	7	0.1
Ժող. վեպեր	F 9.1.7	1	1	—	2	1	1	—	6	0.1
Աշուղական երգեր	F 9.3	17	41	22	15	27	49	29	200	4.7
Նաղիկներ	F 9.5	87	123	93	75	151	119	2	650	15.2
Ծրագրեր	F 9.6	31	43	27	18	41	17	33	210	4.9
Ընդամենը		530	666	643	582	730	597	524	4273	100
Տ օ կ ո ս		12.4	15.6	15.0	13.6	17.1	14.0	12.3		

սաց Հայկադ Մկրտչյանը մեր առաջադրած հարցին, թե ումից, ի՞նչ ճանապարհով են նրան հասել իր հաղորդած նյութերը, պատասխանեց. «Պապերս Ալաշկերտա Բաթնոս դյուղից են, ես չըմտեսեմ էնոնց, հրմա րաթնոսցի Ծղոյ Արշակ լսել էր. իմ պապերուց Վոռերու պատմութեն, էնորից էլ ես եմ լսած ու սովորած»:

Հիմա ընդունելով րանասացների հաղորդումները, անք, երբ լրացնում էինք «նյութերի գրառման վայրը» հարցր, նկատեցինք, որ այն չի համընկնում ծագման վայրի հետ, ուստի և նյութերի վավերագրման ընթացքում անհրաժեշտորեն այդ կետում նշվեց երկու տեղավայր՝ նյութի գրառման և ծագման վայրը: Ինչու՞ է բացատրվում այս

երևույթը. եթե մի կողմից այն առնչվում և պատճառարանվում է XIX դ. հասարակական, քաղաքական և աղդային տեղաշարժերով, դաղթով, վերարակեցմամբ, ապա մյուս կողմից խորանալով նյութերի ծագման բուն հայրենիքի հարցի մեջ, մեր առաջ հնարավորություն է բացվում պարզելու, թե ի՞նչ է բերված նոր հայրենիք և ավանդապահության ի՞նչ մակարդակի վրա է ավել աղդադրական խումբը, հարցեր, որոնց անդրադառնալիս նկատում ենք ավանդապահության երկու մակարդակ: Գրառված նյութերի 80%-ը րաժին է ընկնում Մուշ, Ալաշկերտ, Դիադին հատվածներին: Աս նյութերի քանակային ընդհանուր պատկերն է:

նկատվում է նաև, որ վիպական բանահյուսությունը ալգադրական այս գոսիներում է գերակշռում և հենց այս՝ Մուշ, Ալաշկերտ, Դիադին, անդավայրերի վերաբերակիչների շառավիղներից է, որ գրառվել է ժողովրդական «Սասնա ծռեր» վեպը:

Ազգագրական այս խմբերի ավանդապահության աստիճանը որոշելիս, իրեն գրական հանգամանք պետք է նշել նաև իրանական և քրդական վեպերը ես պահպանելն ու մինչև մեր օրերը հասցնելու նթն «Սասնա ծռերը» իրեն հոգհալազատ, սեփական մասունք են պահպանել, ապա օտար, հարեան ժողովուրդների բանահյուսական արժեքները, որոնք, ամենայն հավանականությամբ, հին հայրենիքում պատմվող ավանդույթ են եղել, սրբությունը պահպանելը և հազարհար խոսում է սովյալ ազգագրական գոտու ընդհանուր ավանդապահական մակարդակի և վերազգային կերտվածքի մասին:

Նյութերը գրառվել են աարեր սեռատարիքային խմբերից (սե՛ս բանասացների սեռատարիքային խմբերի աղ. № 2): Աղյուսակում պակերված են 1971—1977 թթ. տվյալները, ըստ որոնց նկատվում է անհամամասնություն աղամարդ և կին բանասացների տոկոսային հարերությունում:

Բանասացների սոցիալական կազմը միատարր է, հիմնականում գյուղացիներ, մասնագիտական պատկանելիության հարցում ես նրկատվում է միատարրություն, համարյա բոլոր ասացողներն էլ հողագործությամբ կամ անասնապահությամբ զրադվող գյուղացիներ են, իրաց առյալ 1—2 դեպք, որ գյուղական ուսուցիչներ էին:

Աղյուսակից (№ 2) երեում է. որ ասացողների սեռային խմբերի մեջ գերիշխողը բոլոր աարիներում եղել է կին բանասացը (75 %), իսկ մնացյալ 25 %-ը կալմել են աղամարդ ասացողները:

Այս անհամամասնությունն ունի իր առարկայական և անձնական պաաճառները:

Հարցին ռավարար պաաասխան աալու համար դիմենք № 1 աղյուսակին, ուր արված են հավաքված նյութերը ըստ քանակի և աարիների: Տախտակում նկատվող ժանրերի քանակային անհամամասնությունը խոսում է այն մասին, որ բանահյուսության որոշ անսակներ քանակապես գերիշխում են հատկապես կին բանասացների շրջանում:

Այդպիսին է, օրինակ, ժողովրդական խաղիկը, որն առկա է բոլոր կին բանասացների երգացանկում և կազմում է մեծ տոկոս, իսկ

աղամարդ բանասացների մոտ կամ իսպառ բացակայում է. կամ շաա քիչ տոկոս է կալմում (բացառություն է կալմում բոլոր ժանրերի համար Գեղամ Ավեսայանը): Այդպիսի ժանրերից են նաև անեծքը, օրհանքը, մասամբ նաև հմայական աղոթքը, որոնց հիմնական կրողներն այսօր կանայք են և աղամարկանց շրջանում հալվադեպ են ասվում: Սա հարցի առարկայական կողմն է:

Աղյուսակ № 2

Գրաման տարեթիվը	Նյութերի քանակը	Բանասացի սեռը	Բանասացների սեռատարիքային խմբերը									Տոկոսային համարը
			1	2	3	4	5	6	7	8	9	
1971	530	m						1	7	19	26	38%
		f					10	9	18	52	24	62%
1972	666	m							1	16	12	26%
		f					9	8	11	38	16	74%
1973	643	m							2	13	11	25%
		f			2	6	7	9	38	15		75%
1974	582	m						1	1	10	8	24%
		f					4	6	8	31	14	76%
1975	730	m							1	8	8	20%
		f			1	4	4	6	38	14		80%
1976	597	m							2	12	14	28%
		f					3	9	9	36	15	72%
1977	524	m						1	1	10	8	25%
		f			1	3	8	8	30	13		75%

Անձնականն այն է. որ բանահավաքը լինելով կին, կին բանասացների հետ գործնական ու հոգերանական առավել սերտ կապեր ու շփումներ է կարողացել հասաաել: Կին երգասացից ավելի հեշտ է գուրս կողղել «աղջկա խաղեր» (խաղիկներն այդպես են անվանվում Անանի ավա-

ղանում) երգատեսակը, քան տղամարդկանցից, որոնք արհամարհանքով և ծաղրով են վերարերվում «աղջկա խաղեր» երգատեսակին:

Գեղջուկ կանայք, մանավանդ երիտառարդները, անդամ մեր օրերում, դժվար են ռացվում աղամարդ լանահավաքների մոտ, այն էլ քաղաքից եկած անժանոթների: Մինչդեռ կին լանահավաքների նկատմամբ, թեկուղ օտար և անժանոթ, դուրին և հոժարակամությամբ են դրսևորում իրենց իմացությունները: Մյուս կողմից՝ կին լանահավաքն ինքն է գրեթե նույն դժվարություններ հանդիպում տղամարդ լանահավաքների հետ շփվելիս, որոնք պատշաճի և անպատշաճի սահմանները նկատի ունենալով, ամեն ինչ չէ, որ կարող են ասել-պատմել մի անժանոթ կնոջ, կամ կին լանահավաքն ինքը, միևնույն հոգեբանական արդելքով, ի կարողանում տղամարդկանցից կորուզել այն ամենը, ինչ անհրաժեշտ է այսօրվա ժողովրդագիտին: Այնուհանդերձ, մեր տևական պրոպագանդայի ընթացքում, որքան հարավոր է եղել, աշխատել ենք հաղթահարել այդ հոգեբանական արգելքները և երկու սեռերից էլ հավասարապես գրանցել լանահավաքական բոլոր կարգի արժեքավոր նյութերը:

Իմ եթե մեր դրառած լանահավաքական սեականների միջև քանակական որոշակի անհամամասնություններ կան, ապա դրանք, կրկնում ենք, հիմնականում արդյունք են առարկայական իրողություն:

Լանահավաքական կենսունակ ժանր է առած-ասացվածքը, որը կենցաղավարում է թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց շրջանում հավասարապես, այդ են վկայում նաև № 3 աղյուսակի ավյալները: Վիպական երկարությունը ստեղծագործությունների (հեքիաթ, դրույց, վեպ) կրողներն հիմնականում տարիքային 7. 8. 9. խմբերին պատկանող տղամարդ լանահավաքներն են:

Այսպես, դրառված 80 հեքիաթի 80 %-ը լանահավաք է ընկնում 8.9 տարիքային խմբերին պատկանող տղամարդ ասացողներին, կանայք ավելի հավաք են երգային լանահավաքությանը, մանր ժանրեր և դրույցներ հաղորդելուն (տե՛ս աղյուսակ № 3):

Տարիների մեր լանահավաքական դիտումները (տե՛ս նյութերի դրառման վայրերի սխեմատիկ քարտեզը) մեղ ընթեր և՛ այն համոզման, որ Սևանում և Կամոյում ավանդական լանահավաքությունը իր անդր աստիճանարար դիջում է նոր քաղաքային տիպի երգարվեստին, անեկդոտին, դրույցին և զվարճախոսությանը:

Քաղաքային կենցաղի ներթափանցումը ետին պլան է մղել կամ մոտացության մասնակ

Նյութի տեսակը	Զգրվածք	Բանաստեղծներ			
		I		II	
		Բանակը	%	Բանակը	%
F 6.2.2	100	80	80	20	20
F 6.4.0	60	55	92	5	80
F 6.4.2	10	6	60	4	40
F 6.4.4	6	6	100	—	—
F 6.4.5	50	40	80	10	20
F 6.5.3	13	7	54	6	46
F 7.1.0	10	4	40	6	60
F 7.1.3	66	50	76	16	24
F 7.1.4	10	6	60	4	40
F 7.1.5	210	190	90	20	10
F 7.1.8	111	80	72	31	28
F 7.1.9	65	35	54	30	46
F 7.2.1	600	303	51	297	49
F 7.2.4	15	10	67	5	33
F 7.2.5	10	8	80	2	20
F 7.3.0	150	80	53	70	47
F 7.3.1	10	—	—	10	100
F 8.1	4	2	50	2	50
F 8.2	8	2	25	6	75
F 8.3	50	15	30	35	70
F 8.4	80	16	20	64	80
F 8.5	6	2	33	4	77
F 9.1.6	7	2	29	5	71
F 9.1.7	6	1	17	5	83
F 9.3	200	126	63	74	37
F 9.5	650	425	65	225	35
F 9.6	210	132	63	78	37

գյուղաշխարհի կենցաղն իր վարքերարքով և ավանդական սովորություններով: Նյութերը տոկոսային դերակշռություն են կառնում Մարտունիում և Վարդենիսում: Վարդենիսի և Արարունու ընկերները Ալաշկերտից, Դիարդինից, Մուշից հաղթած վերարնակիչների շառավիղներն են, որոնք իրենց աղղադրական նկարագրով ավելի պահպանողական են ու ավանդապահ:

Մինչև 1972 թ. Վարդենիսում և բոլորովին վերջերս (1976—77 թթ.) Մարտունիում կային հեքիաթասերներ, որոնք օգաներում ձմռան-երկար դիշերներին պատմում էին հեքիաթներ: Այս փաստը եթե մի կողմից վկայում է հիշյալ ընկերավայրի հայ ազգայնակալության լանահավաքական ավանդապահության մասին, ապա մյուս կողմից հավաստում է լանահավաքական որոշակի ժանրերի տվյալ աղղադրական գոտում ակտիվ կենցաղավարելու պրոցեսը, որի արդյունքը քա-

նակային և որակային արտահայտութեամբ տըրված է № 1 աղյուստով:

Բանահյուսական այս համենի ավանդույթի պահպանումը հիմնականում նկատվում է Ալաշկերտից, Մուշից, Դիաղինից ելած աղագրական խմբավորումների սերունդների շրջանում: Աղագրական այս դոտինների սեռատարիքային 7, 8, 9 խմբերի բանասացներից են դրի առնվել ավանդական բանահյուսության ռազմաթիվ նմուշներ:

Սեանի ավագանի հայ բնակչության բաղմատարրության պայմաններում նկատվում է աղագրական առանձին խմբերի համակենտրոնացում շրջաններում: Կամոյի հիմնական բնակիչներն, օրինակ, ռայսպետներն են, Մարտունիին՝ ալաշկերտցիներ, Վարդենիսին՝ դիաղինցիներ: Այս հանդամանքը մի կողմից նպաստում է տըրվալ տղագրական խմբի հոգեոր մշակույթի մտսին հասակ ու որոշակի պատկերացում կազմելուն, մյուս կողմից համեմատության եզր բացում աղագրական ասորեր հատվածների բանահյուսական ավանդույթների պահպանման գործակիցը բացահայտելու անսակեաից:

Ուշագրավ հարց է այն, թե ավանգական բանահյուսությունից ինչ է պահպանվել և ինչպես, եղածի մեջ ինչ փոփոխություններ են տեղի ունեցել և ասորեր ու հարեան աղագրական խմբերից ինչ է փոխանցվել միմյանց, այլ կերպ ասած, մեղ հետաքրքրում է բանահյուսական կոնսոլիդացիայի և ինտեղրացիայի ողջ պրոցեսը Սեանի ավանդանի բնակչության աղագրական խմբերի միջև:

Ավանգական բանահյուսության լավագույն նմուշներից է «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը: Մեր բանահավաքական աշխատանքների ընթացքում հաջողվեց դրանով վեպի 6 պատում՝ աղագրական երեք խմբավորումներից, նախկին ալաշկերտցիների, դիաղինցիների և մշեցիների սերունդներից: Վեպի տոկայության փաստը աղագրական այս խմբերում խոստում է այն մասին, որ դործ ունենք ավանդապահ ժողովրդի մի համալծի հետ, որը նոր հայրենիքում անգամ պահպանում ու հաղորդում է այդ ավանդական մասունքները տարրերայնացման և տեղայնացման որոշ գծերով: Վեպի ասացողները աղագրական տարրեր խմբերի պահպանող ծերունիներ են (տե՛ս ծանոթագրությունների աղյուսակ): Վեպը նոր հայրենիքում՝ Մարտունիում և Վարդենիսում, ասացողների կողմից դիտակցվում է թեպետ իրեն «խեբիաթ», սակայն վիպական իրադարձությունների և հերոսների նկատմամբ բանասացի

խոր հավատով ու ակնածանքով, իրեն իրական դեպքերի ու գեմքերի:

Վեպի աշխարհագրական միջավայրը նույն Աստուեն է իր շրջակա գյուղերով ու բնակաանդիներով՝ Խլտթ, Ծապաղչուր, Մարութա սար, Փրեքաթման և այլն:

Վեպը դրաոված է ըացառապես տարեց վիպասուններից, ևւկտրտաւ փնարտուքից հետո որի ընթացքում պարզ դարձավ, որ վեպը այժմ պատմվում է սակավ. այն ըոնել է մոռացության ճանապարհը, նրանով հետաքրքրվողների շրջանակները սեղմվելով ու փոքրանալով հասել են հատուկենտ անհասանների, որոնցից շատերն հիշում են, ըայց դժվարությամբ են պատմում, անգամ եթե պատմում են էլ՝ շատ դեպքեր ու դեմքեր աղճասոված կամ մոռացված:

Մեր դրառած ըոլոր տառամներում վեպի չորս ճյուղերն ու դրանց սովանական հաջորդականությունը պահպանված են:

Հավաքչական աշխատանքի ընթացքում ու միշա էր. որ վեպը մեղ հանդիպում էր իր կուռ ամրողչականության մեջ, բոլոր չորս ճյուղերով, նղան դեպքեր նաւ, երբ հաղորդվում էր հաավածարար, այս կամ այն ճյուղը, հերոսների որեէ մի սխրադործություն կամ մի դրվագ վեպից, իրեն առանձին պատմություն:

Հաճախ բանասացը մեր այն հարցին, թե դիտե՞ք արդյոք «Սասնա ծռերի» պատմությունը, պատասխանում էր ըացասաբար, բայց հետագա գրառումների ընթացքում բացահայտվում էր, որ գիաի առանձին հատվածներ Մհերի, Դավթի «կոիվներց»:

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպը Գեղարքունիքում ապրում է մասնատման գոյավիճակ, որը վեպի աստիճանական մոռացման վտանդ է ստեղծում:

Ինչպես արգեն նշել ենք, արեմաահայ հաավածում պատմվող ավանդույթ են եղել իրանական «Ռոստամ Զալ», քրդական «Արուսեթե Բնալալ» վեպերը: «Ռոստամ Զալի» առաջին գրառումներն ու հրատարակման մենաշնորհը պատկանում է ռազմավաստակ բանաղետ Բագրատ Խալաթյանյի³, ապա աակավին դարասկզբին «Էմինյան աղագրական ժողովածուի» ն հատորում (1904 թ.) բանահավաք Ս. Հայկունին դեաւղում է Ռոստամ Զալի չորս պատում և նույն ժողովածուի Բ հատորում քրդական «Ապուղեթ» վեպը. ճիշա է, այս պատումներից և ոչ մեկն է Ալաշկերաից, Դիաղինից կամ Մուշից, այսուհանդերձ արեմահայության այն հատվածների սերունդներից է գրաոված,

³ «Բանասեր», Փ. Րիզ, 1901 թ.:

որոնք XIX դարի սկզբին վերաբնակեցվեցին Արեւելեան Հայաստանում:

Իրանական (Ռոստամ Զալ) և քրդական (Արուսեթե Բնալալ և Ալիֆն սւ Քլեֆը) վեպերը պրի են տոնված անդրագետ վիպասացներից, որոնք բացառիկ հիշողությամբ և պատմելու վիպական տվտնդական շնորհքով օժանդակ անձնավորություններ են: Ինչու հաակապես այս վեպերն են պահպանվել և հասել մեր օրերը. նախ այն պարզ պատճառով, որ հայ ժողովրդի այս հասվածքը տարիներ շարունակ ապրել է քուրդ և ալաղդի ժողովուրդների հարանու-թյամբ, որն իր հետքը անաարակույս պեաք է փոխադարձաբար թողներ մշակույթի, կենցաղի և րանավոր ստեղծագործության մեջ, և ապա ասար լծի տուկ տառապող հայ ժողովրդի համար հանապապօրյա հոգևոր սնունդ են եղել իր պատմության հերոսական գրվադները, «Սասնա ծռեր» վեպի հերոսները, ինչպես նաև Իրանի աղգային հերոս Ռոստամի պալքարն ու սխրագործությունները: Պատմվել են այգ բոլորը, անցել սերնդեսերունգ, սիրվել ժողովրդի կողմից ու հասել մինչև մեր օրերը:

Եվ ահա այդ մասունքները ասացողները մեծ սիրով հաղորդեցին մեղ. այսպես, 96-ամյա Գեղամ Ավետիսյանը, որը նախնիները Ալաշկերտի Մանդասար գյուղից են եղել, պատմում է. «Զալօղլի Ռոստամ իմ պար շատ կսիրեր, կմտկպատմեր օր դուռ հերթիկ կլնդոտեր, կժողվին, կթափին մեր օդեն, հըմլա ձենով կերգեր օր կըշիվարինք, իմ խեր Մավջուտ էնորից էր սորված, էնի նիկոլի դինվոր էր հեղած, ևս էլ իմ խորից», ահա այս պատմվող սովանգույթը հասնելով մեր օրերը, իր վրա կրել է ասացողի սոցիալական պատկանելիության կնիքը. այն հանգամանքը, որ Գեղամի հայրը «Նիկոլի դինվորն» է եղել, իր արտացոլումն է դաել վեպում. այսպես, բանասացը, նկարագրելով Ռոստամի քաջագործությունները, նշում է, թե ինչպես կովողները իրար ձայն տալով, հաղորդակցվելով ավելի էին գոտեպնդվում և ապա կովի ելնում ճիշտ այնպես, «ինչպես օր նիկուլայ թագավոր սալդթին էրաղ կիմցուցեր, օր էրթին կոիվ, շվախնին...»: Այս արդեն ավանդական վեպ ներթափանցած նոր միջավայրի, նոր կյանքի, ինչպես նաև նոր ասացողի հավելում է:

Իրանական վիպական գրույցները, ինչպես հայտնի է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»⁴ հայ իրականության մեջ շատ են պատմվել: Մեծ տաամահոր մոտ ենք հանդիպում

նաև Իրանի վիպաշխարհի հերոսներից՝ Ռոստամի անվան ամենավաղ հիշատակությունը. «Ռոստամի անունը,—գրում է արեւելյան դրականության լավագույն մասնագետներից էգ. Բրաունը,—դանվել է ուշ շրջանի պահլավական գրությունների մեջ մեկ կամ երկու անգ, մինչդեռ նրա հուժկու գործերը հայանի են եղել հայտնղի Մովսես Խորենացուն»⁵:

Խորենացին քաղ տեղյակ է եղել ինչպես առհասարակ իրանական վիպական գրույցներին, նույնպես և Ռոստամի առասպելին, նրա հերոսական գործերին, նշելով, որ պարսիկները նրա մասին ասում էին, որ «120 փղի ուժ է ունեցել»⁶:

Հայ իրականության մեջ XI պարում Գրիգոր Մաղիստորոսն է հիշատակում ևս մեկ առասպել պահլավական Ռոստամ Սաղճիկի, Ռաշի և Դյուղեղի» մասին, և քանի որ այն պահպանված է միայն Գ. Մաղիստորոսի «Թղթեր» աշխատությունում և ոչ ալուր, ուստի և պետք է եզրակացնել,—գրում է հայ-իրանական գրական կապերի մասնագետ Բարկեն Զուգասդյանը,—որ Մաղիսարոսը այս առասպելը քաղել է իր ձեռքի տակ եղած ուրիշ աղբյուրներից և կամ հավանաբար լսել ու գրի է առել ժողովրդից»⁷:

Այնուհետև պակաս հետաքրքրություն չի ներկայացնում XIII դարում Կոստանտին Երզնկացու վեպությունը այն մասին, որ իրանական ժողովրդական վեպ «Շահնամեն» երգվել է հայերի շրջանում և նույնիսկ նրա արվեստով ու րանաստեղծական շափով հայերը երգեր են ստեղծել. «Այր մի (նսա)ել կայր ու Շահնամա ասէր ձայնով»⁸:

Մ. Սրեղյանի վեպությունամբ՝ հայ իրականության մեջ «Շահնամենի» րանաստեղծական շափով հորինվել են տաղեր տակավին X դարից: Վերոբերյալ փաստերը խոսում են այն մասին, որ հայերը ապրելով պարսիկների հարանու-թյամբ, հնագույն ժամանակներից շփվել են նրանց մշակույթին և գրականությանը, պատմել նրանց գրույցներն ու առասպելները, վիգական րանահյուսություն, բաղմաթիվ հտավածներ, պատմվող ավանդույթի ձևով սւ սերնդեսերունդ փոխանցելով, իրենց սեփական վեպի՝ «Սասնա ծռերի» հերոսների կողքին պատմել են Իրանի

⁵ Բ. Զուգասդյան, Հայ-իրանական առնչություններ, Երևան, 1963, էջ 20:

⁶ Մովսես Խորենացի, նշվ. աշխ., էջ 157:

⁷ Բ. Զուգասդյան, նշվ. աշխ., էջ 96:

⁸ Կոստանտին Երզնկացի, ԺԳ դարու ժողովրդական րանաստեղծ և յուր քերթվածներ, Վենետիկ, Ս. Ղազար, 1905, էջ 128:

⁹ Մ. Արեղյան, Երկեր, Գ, 1970, էջ 396:

⁴ Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 156—157:

հերոսների սիրազորություններն ու հասցրել են մինչև մեր օրերը:

* * *

Գեղարքունիքի ռանահյուսության մեջ իր խոշոր բաժինն ունի նաև ժողովրդական արձակը՝ հեքիաթը, դրույցը, առակը:

Բանահյուսական այս տեսակը, հատկապես հեքիաթը, որը թվում է թե իր դարն ասլել է և մոռացության մասնակից, Սեանի ավաղանում խոշոր թիվ կաղմեց (տե՛ս աղ. № 1) և ռազմարձնույթ էր իր էությունը: Այդտեղ կան հրաշապատում, կենցաղային, բարոյախրատական ընույթի հեքիաթներ և զրույցներ, ժողովածուի մեջ դրանք խմբավորված և դասակարգված են հենց այդ կարգով, հաշվի է առնված նաև նրանցում առկա մոտիվների կոմպլեքսը:

Հեքիաթների պատմաաշխարհագրական ընդգրկումը խիստ համահնչյուն է իրենց ծագման հայրենիքի և զբաղման վայրի աեղանքին: Հեքիաթասացը իր ևրեակայությանը բնականորեն սավառնում է իրեն ջրջապատող աշխարհագրական միջավայրում (լեռներ, դաշտեր, շատ հաճախ ծով՝ նկատի ունենալով Սեանա լիճը (№ 2(10)», 4(12), 7(15), ընդգրկելով նաև ավալ աշխարհագրական միջավայրի հառուկ բուսական և կենդանական աշխարհը (օձ, ձուկ, մողես, բանջար, ավելուկ, սիւտկուկ, վառաղուկ ծաղիկ և այլն): Հաճախ հեքիաթներում հիշատակվում են ջրհոր, աղբյուր հասկացություններ: Զուրը առհասարակ անմահության և երկարակեցության դերրնական ուժով է օժտված հեքիաթներում, այն կենսատու ուժ ունի և հաճախ բոնաղստվում է բնության շտր ևրեությունների (դեերի, ողիների) կողմից:

Հեքիաթներում իրրե անմահության խորհրդանիշ հաճախ կարելի է հանդիպել «անմահական խնձոր» հասկացությանը, մի մոտիվ, որը հատուկ է առհասարակ համաշխարհային հեքիաթասացությանը, № 1(9), 3(11): Հեքիաթներում աշխարհագրական միջավայր հասկացությունը ևս մասնակիորեն տեղայնացվել է. հաճախ հիշատակվում են Սեանի ավաղանի աեղանքին հատուկ աշխարհագրական տեղանուններ, սրբավայրեր և հասկացություններ, № 2(10): Հեքիաթներում իրրե գործող հերոսներ ևն ներկայանում շար ու բարի, հնարադետ, գործունյա, ծույլ և անրան կերպարներ, ինչպես նաև վաճառականներ, արհեստավորներ, որսորդներ, ձկնորսներ և այլն:

Տարածված կերպար է հնարապետ, խորամանկ և րանսարկու քյաշալի կերպարը: «Քյաշիկը»


հեքիաթների այն կերպարն է. որը օղնության է հասնում դրական հերոսին և հնարամտորեն նրան հանում նեղ վիճակից: Քյաշալի կերպարի միջաղային, ինչպես նաև հարեան ժողովուրդների հեքիաթների ղուգահեռները խոսում են այն մասին, որ այն շատ աարածված է եղել Արեելքի ժողովուրդների ռանահյուսական ստեղծագործություններում (տե՛ս ծնթղր. № 13(221): Հայ հեքիաթների պատմաաշխարհագրական այս հատվածների համար դրական հերոսի կերպար է փոքր եղրայրը՝ երեք ևղրայրներից ամենափոքրը, ամենաարգարամիտը, աշխատասերն ու ազնիվը: Նա գծվարություններից շրնկճվող հերոս է, հաղթանակի հասնելու տոկունությունն ու լավատեսությունը նրան հաջողություն ևն բերում: Այս մոտիվը ևս ունի իր միջաղային ղուգահեռները (տե՛ս ծնթղր. № 1(9): Ոչ տակաս հեաաքքիր գործող անձ է ճարպիկ, հնարամիտ, փոքր-ինչ անաղնիվ դժերով օժտված «գող» Սլեքսանի կերպարը: Կերպարի միջաղային ղուգահեռների հեա (աե՛ս ծնթղր. № 30(39) համադրումը բերում է այն եղրակացության, որ այս կերպարը իր գործունեությամբ հասարակական շարիքի դեմ պայքարի յուրօրինակ ձև է ընարել՝ հիմարացնել րարձրասաիճան անձանց, ընդհուպ մինչև թագավորը:


Հայկական հեքիաթների աղագրական այս խմբերը համար րնորոշ և հաճախ հանդիպող կերպար է՝ Բափաղյուը (մեկաղքանին): Սա հունական Պոլիֆեմ կիկլոպի հայկական նմանակն է, հնագույն մի կերպար, որն անխոցելի է. ոչ մի միջոցով նրա դեմ չի կարելի պայքարել, հսկա է և օժտված անսահման մեծ ուժով, բայց բնականորեն հեքիաթի րարի ուժերը հսղթհաբում են այդ հսկային և աապալում նրան: Այստեղ ևս րնության շար և բարի ուժերի պայքարի դաղավարն է՝ բարու հաղթանակը (տե՛ս № 20/35, 27/36):

Հեքիաթներում ու զրույցներում հաճախ հիշատակվում են նաև պատմական այնպիսի դեմքեր, ինչպիսիք են՝ Շահ-Աբասը, Սուլթան Մուրաղը (աե՛ս ծնթղր. № 48/57, 49/58, 50/59, 22/31, 23/32, 51/60, 52/1, 53/62):

Պատմական այս դեմքերը, որոնք րախաորոշ դեր են կատարել հայ ժողովրդի կյանքում, հայտնի են դարձել իրենց դաժանությունների շնորհիվ: Շահ-Աբասը այն քաղաքական գործիչն էր, որն իր րենապետական քմահաճույքով ու քաղաքականությամբ ամեն ինչ ծառայեցնում էր ի նպաստ Իրանի հզորացման ու րարօրության: Հայ ժողովրդական զրույցներում արասցուվել է այդ րոնակալի սովորություններից մեկը՝ ծպա-

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՆԵՍԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ





յալ դուրս դալ ժողովրդի մեջ, տեղեկտնալ ընդհանուր վիճակի մասին և սեփական ձեռքով դաժան դատաստան տեսնել. «Իսկ ինքն Շահ-Սրառը ոտ հանապաղորդ սովորութեան իւրոյ՝ որ այլակերպեալ զինքն ձեանայր, որպէս զմի ոք ի զինուորացի և զնայր ի մէջ արանց և ժողովրդոց իմանալ և գիտել զբան ինչ...»¹⁰։

Պատմական այս կամ այն դեմքերի շուրջը հյուսված դրույցներն ու պատմութիւնները վկայում են նրանց կատարած բացառիկ դերի մասին հայ ժողովրդի կյանքում, իսկ ժողովուրդը զբաղեցնելով լուրջամբ անցնել չէր կարող. զրույցներում առկա է ժողովրդի ղուսալ ընդունելու թրշնամանքը դաժան բռնակալի դեմ (տե՛ս ծնթգր. 50/59, 51/60, 52/61, 53/62 և այլն)։

Շրջապատող կենդանական աշխարհը ևս ակտիվ մասնակցութիւն ունի հայկական հեքիաթներից շատերում՝ օձն իր իմաստնութեամբ, շունն ու կատուն հավատարմութեամբ, աղվեսը խորամանկութեամբ, գայլն աղահուսթեամբ, ձերոսի անմիջական օգնականներն են սև և սպիտակ ուղիները, որոնք նրան ղուրս են բերում լույս կամ մութ աշխարհ. հավատարիմ ուղեկիցներն են աղչկա գլխով թռչնամարմին փերիներն ու սինամ հավքերը, որոնք զրեթե միշտ օգնում են զրական հերոսին նրա պայքարում ընդդէմ բնութեան շար սւժերի՝ դեերի, հրեշների ու վիշապների։

Ահա այսպիսին է հայկական հեքիաթներում գործող հերոսների կոմպլեքսը, որոնց բոլորի միջադէպին ղուդահեռները զբաղեցնում են ծանոթութիւնների բաժնի № 1/1—86/95 համարակալման տակ։

Այնուհետև անհրաժեշտ է համառոտակի նշել այն հիմնական մոտիվները, որոնք առկա են աղագրական այս խմբերի հեքիաթներում։ Շատ տարածված մոտիվ է ինչպես հայկական, նույնպես հարեւոյ ժողովուրդների բանահյուսութեան մեջ «անժառանգ ծնողների» մոտիվը. նրանց տառապանքները և դավալ ունենալու անհուն երազանքը և վերջապես անմիջականորեն այս մոտիվին առնչվող և լուծում տվող գերվիշի, ինձորի և կամ բարի հյուրի հայտնվելու մոտիվը։ Հմայութեան և կախարհութեան հին հավատքի զրեռում է հեքիաթներում կախարդ դերվիշների մոտիվը, որոնց հրաշագործ օգնութեամբ, հմայութեամբ կանայք երեխա, ժառանգ ևն ունենում։

Հինարեւելյան ժողովուրդների մտածողութեանը ու բանահյուսութեանը հոգեհարադառա այս մոտիվի զրեռումներին մենք հանդիպում ենք

նաև Գեղարքունիքի հայկական հեքիաթներում (տե՛ս № 1/9—3/11, 6/14)։

Հայկական հեքիաթներում կնոջ անհավատարմութիւնը ղիտվում է իրրե շարիք և դատաւարութիւն ամենադաժան միջոցներով (տե՛ս № 6/14)։ Անհավատարիմ կնոջ մոտիվը առկա է № 10/3, 11/14 հեքիաթներում և ունի նաև իր միջադէպին ղուդահեռները (տե՛ս ծնթգր. № 21/10, 21/30)։ Սիրեցյալ կնոջը հասնելու համար հերոսի կրած անթիվ տառապանքներն ու դժվարութիւնները պսակվում են հաղթանակով, այս մոտիվը առկա է № 12/21, 13/22, 14/23 հեքիաթներում և նույնպես ունի իր միջադէպին ղուդահեռները (աե՛ս ծնթգր. № 12/21, 13/22)։ Հերոսը մեծ կամք, համառութիւն և հերոսութիւն է ցուցաբերում իր նպատակին հասնելու համար։ Սա սովորաբար ժողովրդի կողմից սիրված անձ է և շատ քիչ ղեպքերում է. որ մնում է անօղնական վիճակում։ Հեքիաթների միջադէպին մոտիվների զրեռումներից պետք է համարել խորթ մոր մոտիվը (№ 18/27), վերջինիս դաժանութիւնները հաղթահարող որբի մոտիվը. օրինաչափորեն որբը հեքիաթներում օժտված է լինում մարդկային բարձր հատկանիշներով. խելոք է, հնարամիտ և շատ շուտով շրջապատի օգնութեամբ զրեռվար կացութիւնից ղուրս դալու ելքը գտնում է։

Ընդհանուր գծերով սրանք են այն հիմնական մոտիվները, որոնք առկա են աղագրական այս դոտիվների հեքիաթներում։ Սրանք նաև վեր են հանում տիպաբանական այն ընդհանրութիւնները, որոնք առկա են տարրեր ժողովուրդների հեքիաթներում։ Հեքիաթների խմբավորումն ըստ մոտիվների բացահայտեց, որ կտ հեքիաթների մի խումբ, որում առկա մոտիվների ղուդահեռների հանդիպում ենք միջադէպին և հարեւոյ ժողովուրդների հեքիաթներում, զրանք հիմնականում Մուշ, Ալաշկերտ, Դիադին աղագրական խմբերի հեքիաթներն են։ Երկրորդ. որ որոշ հեքիաթներ հարաբերական տեղայնացման են ենթարկված, խիստ աղագրին են և ընդհանրութիւն չունեն միջադէպին հեքիաթասացութեան մոտիվների հետ (տե՛ս № 17/26, 19/28, 23/32, 33/42, 35(44), 36(5) և բազմաթիվ զրույցներ, որոնց ղուդահեռները ղկան միջադէպին կատարողներում, ինչպես նաև հարեւոյ ժողովուրդների մոտ (տե՛ս № 60/69—87/96)։

* * *

Հեքիաթներն իրենց կառուցվածքով ևս տվանդական կաղապարի մեջ են, համեմատ ժողովրդական մտածողութեան հատուկ բառ ու բանով, հնարանքներով, բանաձևերով։ Այս հար-

¹⁰ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցոյ», Վաղարշապատ, 1884, էջ 129։

ցերին անդրադառնալիս անհրաժեշտ է նշել, որ նյութերը գրանցված են անմիջականորեն ասացողից, առաջին հաղորդողից, գրի են առնված հարադատորեն, պահպանելով ասացողի ոճի բոլոր նրբերանգներն ու արաահայտչամիջոցները, Հեքիաթները Գեղարքունիքի բանահյուսության մեջ առանձնանում են իրենց ժողովրդական մրտածողության հատուկ արտահայտչամիջոցների առատությամբ: Հեքիաթների կառուցվածքին ժանոթանալիս նկատվում է բանաձևերի երեք խմբավորում. առաջին՝ նախասկիզբ բանաձևերը, մինչև ըստ հեքիաթը պատմելը ասացողը օրինաչափորեն ասում է ինչ-որ բանաձև, այն կարող է լինել սովորական «կեղնի, չեղնի», «ավալ ժամանակով», «խի ժամանակով», «հառեջ ժամանակ» և այլ բավարարիչ սկիզբ-բանաձևեր: Երկրորդ՝ միջին պատմողական բանաձևեր և երրորդ՝ վերջաբան բանաձևեր:

Այժմ տեսնենք բանաձևերից որոնք են բնորոշ աղագրական այս դոտինների համար, վերոհիշյալ բանաձևերը ինչ պակեր ունեն, ինչ ձևով են ներկայանում տվյալ խմբերի հեքիաթներում: Նախապես պետք է նշել, որ ավանդական բանաձևային այս սխեման պետք է քննարկվի 1971—77 թթ. մեր գրառած նյութերի շրջանակներում:

Հայտնի է, որ յուրաքանչյուր հեքիաթասաց սկզբից ևեթ արտահայտում է իր վերաբերմունքը պատմածի նկատմամբ, ասելով «հեղի ա չի հելե», «կեղնի չեղնի» և այլ բանաձևեր, որոնց 1-ին՝ հաստատական մասին, հաջորդում է 2-րդը՝ թերահավատությունն ու վերապահությունը պատմածի նկատմամբ, մի վերաբերմունք, որը խորանում է արդեն միջանկյալ «խեքթի բան ա էլի» բանաձևում: Այս թերահավատությունը պատմողի դեպքերի և դեմքերի նկատմամբ չի խանգարում բանասացին իր պատմածը դնելու ժամանակ և տարածություն հասկացությունների շրջանակում, նշելով «հառեջ ժամանակով», «ավալ ժամանակով» և այլն բանաձևերը: Նմանօրինակ թեական բանաձևային նախասկիզբ ունեն հիմնականում հրաշապատում հեքիաթները. եթե նախասկիզբ բանաձևերով դժվար է որոշել այն հարցը, թե բանասացը հավատում է իր պատմած դեպքերին ու դեմքերին, ապա միջանկյալ բանաձևերը, ասույթները այս հարցին ավելի որոշակի պատասխան կարող են տալ: Այսպես, մեր պրառած հեքիաթների մեծագույն մասում, երբ բանասացը պատմում է որևէ անիրական դեպք կամ նկարագրում է որևէ հրաշալի հերոս, ապա նման դեպքերում ավելացնում է «Դր խեքթի բան ա էլի», «Դր խեքթի ճիժա էլի, շուա կը-

ջոջնա», «խեքթի դսայա էսի», աչիսն չեքիաթ է, ոչ իրական, չեղած մի գործողություն, դեպք կամ դեմք: Մեր սեփական գրառումներով համոզվեցինք, որ բանասացների մեծագույն մասը թերահավատորեն են վերաբերվում իրենց պատմածին, բայց որովհետև սիրում են հրաշապատում բարդ իրավիճակներ, հույի աեսարաններ, ուստի և սիրով պատմում են՝ նկատի ունենալով ունկնդիրներին:

Ուստի և հեքիաթների նախասկիզբ բանաձևերը օգնում են բանասացի վերաբերմունքը պարզելու հարցում, եթե նախասկիզբ և վերջաբան բանաձևերը բոլոր հեքիաթներում ունեն իրենց կայուն տեղը, ապա նույնը չի կարելի ասել միջանկյալ ասույթների, բանաձևերի մասին, որոնք ոչ միայն որոշակի աեղ շունեն, այլև սփռված են հեքիաթով մեկ, դրսևորելով բանասացի մտորումներն ու վերաբերմունքը պատմածի, հաղորդածի նկատմամբ: Միջանկյալ բանաձևերն ունեն մի քանի ֆունկցիա, երբ բանասացը ունկնդրի և հեքիաթի հերոսի միջև լուրահեռ է անցկացնում, յուրօրինակ սթափեցնող երանդ հաղորդելով պատմածին՝ «բարի լուս րացվի վրը ձրդի, սուդ ու շիվան վրը ընոնց». հաճախ կարելի է հանդիպել միջանկյալ բանաձևերի, որոնք հասուկ աշխուժություն ու կենդանություն են հաղորդում հեքիաթին, ունկնդիրներին տեղափոխելով դեպքից դեպք, գեմքից գեմք՝ «...թագավորի աղին թողնենք էլտեղ՝ մենք սալխ աանք աղջրկանից...», «խարար տանք ողրից...» և այլն:

Բանասացը այս կամ այն դեպքը պատմելիս փորձում է լսողին սթափեցնել հարցական և բացականչական միջարկություններով և միջանկյալ բանաձևերով «... ողիր նսաուկ էր, դու մի ասա էնի էր սպանե ճժերուն...» և կամ «... հելավ կեթա... դո՞ր ա կեթա», «...նայեց աեսավ, ի՞նչ տեսավ...», այսպիսով, միջանկյալ այս կարգի բանաձևերը ունկնդիրներին ձգում են հեքիաթի մեջ, դաստ պահում նրանց, իսկ բանասացի խոսքին հաղորդում աշխուժություն ու արահայտչականություն: Հիշյալ միջանկյալ բանաձևերը բանասացը օգտագործում է այն պահերին, երբ հեքիաթը խաղաղ պատմելաձևի ընթացքում է և վաանդ կա որ միօրինակ ու տաղտուկ կդառնա. հենց այդ պահերին էլ հմուտ բանասացը աշխուժացնում է իր խոսքը միջանկյալ բացականչություններով, ասույթներով ու բանաձևերով:

Միջանկյալ բանաձևերի կարգին պետք է դասել նաև հերոսներին բնութագրող արահայտությունները. «էմալ խորոտ, դանայլու աղջիկ էր, աբեկն կըսեր դու մի հելի դուս, ես բոլ եմ»

կամ. «ձին քյահլան էր՝ ամպերու խեւ կխա-
ղար...», լուսնակ հերես ուներ, յուտես, չխմես
հերեսին նայես...», ինչպես նաև «աստու հրա-
մանով», «օձն հուր պորտով, դուշն հուր թևով...»
Հմայական-կախարդական բնույթի բանաձևերը,
որոնք աչքի են ընկնում իրենց կառուցվածքի և
օգտագործման կայունությամբ:

Հեքիաթների կառուցվածքում ի՞նչ դեր են
խաղում վերջարան բանաձևերը. նշենք դրանցից
մի քտնիսը, որոնք հաաուկ են ալղադրական այս
խմբերի հեքիաթներին. «բարին ըստի, շարն ըն-
աի», «ընտոնք խասան հուրանց մուրադին, դուք
էլ խասեք ձեր մուրադին», «վերենն երեք խնձոր
հիճավ», «էնի նստավ հուր խոր թախսին, ձեր
մեկ բալեն էլ նստի հուր խոր թախսին», «բարով
էթաք խասեք ձեր մուրադին»:

Ինչպես կարելի է նկատել, ավանդական ա-
վարտը՝ «երկնքուց երեք խնձոր հընդավ...» քիչ
է հանդիպում այս տեղավայրերի հեքիաթներում,
հիմնականում ավարտ-բանաձևերը կրում են ըս-
թափեցնող բնույթ և ստանում օրհնանք-մաղթան-
քի երանդ: Իրապատում հեքիաթների ավարա-
վերջաբանները ունենում են բարոյախրատական
բնույթ և ստանում ձևակերպված առած-ասաց-
վածքի տեսք:

Դեպքերի դարգացումը հեքիաթների մեջ ըն-
թանում է պարզից դեպի բարդ և հաճախ ավարտ-
վում կարճառոտ աֆորիզմային բարոյախրա-
տական բնույթի ձևակերպումներով: Ըստ էու-
թյան խորը և ժողովրդի կենսափորձից բխող այս
ձևակերպումները շատ հաճախ հիմք են դառնում
հեքիաթների մասնատման առանձին ղրույցների:
Հաճախ հեքիաթներում հեքիաթ է պատմվում և
պատահում են այնպիսի դեպքեր, երբ այդ պատ-
մովող հեքիաթը անջատվում է իբրև առանձին
միավոր. տե՛ս FG: 0347—0350:

Գեղարքունիքի բանահյուսական արձակում
հրենց ուրույն տեղն ունեն նաև կենցաղային ղը-
ույցներն ու մանրապատում ղվարճախոսու-
թյունները:

Պատմաաղագրական այս խմբերի համար
հանաչված ղվարճախոս է ըայալեացի Գաղղո-
յան Արամը, որը Գեղարքունիքում հորջորջվում
է Գաղղոյ Արամ անվամբ:

Գաղղոյան Արամի նախնիները ըայաղեացի
ին, գաղթած 1828 թվականի ռուս-պարսկական
պատերազմի դադարի օրերին: Ըստ Արամի աված
ոեղեկության Գաղղոյանների ընտանիքը իրրև
լվարճախոսներ հռչակված է եղել Բայաղեաի
շավառում: Հանպարասաի սրախոսություն-
ներով, դիպուկ և սրամիա արահայտություննե-

րով այդ ընտանիքը դավտում վայելել է հար-
դանք և սեր, և բնականորեն այդ ավանդույթները
փոխանցվել են սերնդից սերունդ և հասել մինչև
մեր օրերը Արամ Գաղղոյանի կերպարով: Այս
զվարճախոսը մասսայականություն է վայելում
ողջ Գեղարքունիքում: Նրա անվան շուրջը ըս-
տեղծված է սրամիա մանրապատումների մեծ
ժառանգություն, որը, սակայն, որոշ ընարությամբ
ենք ներկայացնում ժողովածուում:

Կենցաղային ղրույցների հիմնական թեման
ընտանիքն է իր առօրյայով, ամուսինների փոխ-
հարաբերություններով: Կինը այս փոխհարաբե-
րություններում առանցքային դեր ունի. նա այդ
ղրույցներում կերպավորվում է թե՛ իբրև հավա-
տարիմ, նվիրված ամուսին (տե՛ս № 55/63, 57/66,
59/68, 60/69, 61/70) և թե՛ իբրև անաղնիվ,
բանասերկու և հրեշավոր մի անձնավորություն, որը
մինչև խելագարության աստիճան կտրող է հասցը-
նել ամուսնուն (տե՛ս № 51/68):

Ղրույցները ևս ունեն իրենց տիպարանական
ղուղահեռները հարևան ժողովուրդների մոտ
(տե՛ս ծնթղր. № 39/48—68/77): Կառուցված-
քային անսակետից սրանք ևս ունեն կայուն ըս-
կիրդ և վերջ, ինչպես հեքիաթը, բայց ավելի հա-
կիրճ, դիպուկ և նպասակասլաց են. իբրև կա-
նոն, վերջանում են տրամաբանական մի դարձ-
վածք-ամփոփումով, որը կարող է առած-ասաց-
վածքի արժեք ունենալ. տե՛ս 37/46, 39/41, 41/50,
42/52, 43/52 և այլն: Դրանք ժողովրդի կենսա-
փորձից ըխող տրամաբանական հետեություն-
ներ են, երբեմն սովորութային օրենքի ուժ սաա-
ցած: «Անղղամի ջառից հեռու մնա» (խրատ),
«Աստու ղրածը ջնջել չի լինի» (առած), «Ճիշտ
խոսողի բերանը ըաց կլինի» (առած):

Այս բնույթի ղրույցների տրամաբանական
հետեությունները ժանրային աեսակետից ձևա-
կերպված միավորներ են և լրացնում են Գեղար-
քունիքի առած-ասացվածքների հարուստ ժառան-
գությունը, որը կաղմում է շուրջ 700 առած-ա-
սացված: Բանահյուսական այս տեսակը աչքի է
ընկնում իր սեղմությամբ, կուռ կառուցվածքով
և ընդգրկում է մարդկային կյանքի ու կենցաղի
ամենարաղմապիսի հարցերն ու երևույթները:
Բանաձևային կառուցվածքը ժանրին հաղորդում
է էպիկական երանդ, հակիրճ ձևի միջոցով շատ
բան ասելու առանձնահատկություն՝ ժողովրդա-
կան առողջ մտածողությամբ կյանքի թերի կող-
մերի քննադատությունից ճիշտ եղրահանդում
կատարելու տռանձնահատկություն:

Առած-ասացվածքների քանակային պատ-
կերը (տե՛ս աղ. № 1) ապացույցն է այն բանի,

որ այս ժամերը կենսունակ և մասնատյական է նաև աղդադրական այս հատվածներում: Առածները ժողովրդի կենսափորձի սրամաքանական հետևություններն են և ծագումնաբանորեն շատ հաճախ կրում են խոր հնություն կնիք: Նրանք անդրադառնում են մարդկային փոխհարաբերություններին, ընտանիքի տնտեսական-հասարակական նշանակություն ունեցող շատ հարցերի, որոնք ավարտվում են փիլիսոփայական խոր ընդհանրացումներով: Նրանք ընդգրկում են շրջապատող աշխարհադրական միջավայրը, բուսական ու կենդանական աշխարհը:

Ինչպես առած-ասացվածքները, նույնպես և դարձվածքները ապրում են ակաիվ կենցաղավարում և իրեն բանաձևեր մեծ աեղ ունեն Գեղարքունիքի խոսակցական լեզվում: օղադրվում են առատորեն՝ չաղորդելով լեզվին և հոգևոր մշակույթին ինքնատիպ երանդ, պատկերավոր արասահայտչականություն, դրսևորելով միևնույն ժամանակ վերաբերմունք շրջապատող ընկերության, արտաքին աշխարհի և մարդկային հարաբերությունների նկատմամբ:

Առած-ասացվածքները և դարձվածքները ժամանակի քննությունը բռնած, մարդկային հարուստ կենսափորձի և պատկերավոր մտածողության կուտ բանաձևային ստեղծագործություններ են, առանց որոնց անհնար է պատկերացնել ժողովրդական մտածողության փայլատակունները:

Հարուստ է Գեղարքունիքը այս բանաձևերով ևս: Նրանք ժողովրդի առօրյա խոսքի տնքակտելի մասն են կաղմում, կենդանություն և պատկերավորություն հաղորդում նրան: Բանաձևային այս կրկու անակների հիմքում էլ ժողովրդական ճշգրիտ մասնողությունը, իրերը և երևույթները դնահատելու օբյեկտիվ ընկալումն է ընկած:

Մանր-բանաձևային ժանրի այս ստեղծագործությունները հետաքրքիր են նաև իրենց կառուցվածքով: Եթե առած-ասացվածքը մեկ նախադասություն է, ապա դարձվածքը մեկ բառից մինչև մեկ նախադասություն կարող է լինել:

* * *

Գեղարքունիքի հիշյալ շրջաններում երգային բանահյուսությունը, մասնավորապես նրա ամենարևոտ անսակը՝ խաղիկը, իր ընդհանուր ավանդական առանձնահատկությունների կայուն կոմպլեքսին զուգահեռ ապրում է ներքին շերտավորման պրոցես, որն ընթանում է ոեղինակ վարիստների փոխանորդության հիմքի վրա: Սա ասորեր աղգագրական խմբավորումների

ներսում կատարվող փոխհարստացման և փոխազդեցության մի պրոցես է: Որի արդյունքը շատ հաճախ հանգում է նոր որակի: Սա հարցի մեկ կողմն է: Խաղիկը փոփոխությունների է ենթարկվում մեկ այլ ճանապարհով ևս՝ պայմանադրված ժողովրդի հասարակական-քաղաքակրթական տնտեսական կյանքում տեղի ունեցած փոփոխություններով ու տեղաշարժերով: Եթե առաջ դեպքում խաղիկը շերտավորվում է, իր մեջ ընդգրկելով ասորեր աղգագրական խմբերին հատուկ տոանձնահատկություններ, ապա երկրորդ դեպքում շերտավորումն ընդգրկում է նոր կյանքին, հասարակական հարաբերություններին հատուկ մոտիվներ (կուլիոդ-շարժում, Հայրենական պատերազմ, խամ ու խոպան և այլն): Այս իմաստով հեաաքրքիր է խաղիկի մեկ օրինակի վրա բանահավաք Ս. Հայկունու XIX դարավերջի Ալաշկերտի խաղիկի դրառումների համադրումը, շուրջ մեկ հարյուրամյակ հեաո նոր հայրենիքում՝ ալաշկերացու, բուլանխցու, վանեցու և րայաղետցու շառավիղներից դրառած նույն կրդի հետ (աե՛ս խաղիկների համադրման աղյուսակ): Նսի՛ տրվում է երդի սիդնատուրային ցուցակը: Մեկ հանրահայա երդի ութ ասորերականների համադրման ճանապարհով մենք կփորձենք աալ շերտավորման այն պրոցեսը, որը աեղի է ունենում երդացանկում: Այս ութ տարրերակները անկասկած վերաբերում են մեկ երդի (տարրերակները համարակալված են 1—8, տողերը ևս ունեն հերթական համարակալում): Հորիզոնական դիրքով այս ասորերակները դիտելիս, ակնառու է դառնում խաղիկում առկա ավանդական կայուն, ինչպես նաև ասորերայնացված մոաիվները:

I-տող. հերոսը դնում է ինչ-որ տեղ. այստեղ առկա են աեղանուններ. բացի «Ստամբուլից» նկատվում է նաև տարրերակման բացարձակ միտում: տեղանունները հանդիպում են կրկնակի անգամ № 3 ասորերակում և եոակի՝ № 5, 2 և № 5, 3 տեքստերում: Սյա առումով № 3 և 5 տարրերակներում նկատվում է ներքին կապ, որը մղում է տեղական վարկածի հնարավորության դաղափարին, քանի որ երկու ասորերակներն էլ դրառված են Գեղարքունիքի հեոավոր՝ Վարդենիսի շրջանում, ուստի և կարելի է ենթադրել, որ այդ հնադույն ասորերակ է, սաեղծված վաղուց, ներկա Հայաստանի սահմաններից դուրս: Այդ են վկայում Ստամբուլ, Արդրում, Խոշյան, Միրդաշան, Զուշան աեղանունները, որոնք Ալաշկերտի և Դիադինի գյուղերից են: № 3—5 տարրերակները շատ մոտ են № 2 Ալաշկերտի վարիանսին, որն ամենահին դրառումն է:

Գնալու, էրթալու միտքը առկա է բոլոր տար-

բերականերում, բայց № 3 և 5-ում այն ավելի ցայտուն է հրեում:

II առդ. ինչ նպատակով է դնում հերոսը. 7 տարբերակից 4-ը իրեն նպատակ նշում են ուտելիք (№ 1, 6—յուղ, № 5—թթու թան, № 7—ծուկ), 2 տարբերակում (№ 2, 3)—փող կամ ոսկի, որոնցով պետք է հայթայթեն «սուրբ» (կոշիկներ):

III և IV առդներ. ո՞ւմ համար են ընկած. ընկերուհու, սիրած աղջկա (№ 1, 2, 3) և սլապի (№ 5):

Այս քննությունը թույլ է տալիս նշելու, որ այստեղ պատկերվում է մի դրվագ հայ կենցաղից՝ իր ընտանիքի կյանքում:

շերտավորվելով ստեղծվում է նոր որակ: Տարբերայնացման այս երևույթը պատմական երկարատև բարդ պրոցես է. որով և պայմանավորվում է տարբերակի ծնունդը:

Նկատվում է նաև երգի փոփոխության մի երկրորդ պրոցես, երբ երգը պահպանելով իր հիմնական կայուն հատկանիշները (չափը, մոտիվը) գառնում է տարբերակ, փոխադրվելով ոչ միայն ներքին հատկանիշներով, այլև լեզվով, բարբառով, խոսվածքով: Սա շատ ընտրող է Գեղարքունիքի հայ երգարվեստին: Այս վերլուծությունը թույլ է տալիս նշելու նաև, որ պատմականորեն ստեղծված աղագրական խախտող-

Երգի սիդնատուրայի ցուցակ

Որտե՞ղ (դրաման վայրը)	Ժամանակ (գրառման տարի)	Ո՞վ (գրառողը)	Ումի՞ց (ասացողը)
Ալաշկերտ	1879—80	Ս. Հայկունի	Ասացողն անհայտ է
Ալաշկերտ	1870—80	Ս. Հայկունի	Կարինե Բաբանյան
Վարդենիս—Դիարիք, Վան	1974	Ռ. Գրիգորյան	Աղնիվ Պողոսյան
Սևան—Խոյ	1973	Ռ. Գրիգորյան	Մարուսյա Մելքոնյան
Վարդենիս—Մուշ	1972	Ռ. Գրիգորյան	Շուշիկ Ավետիսյան
Մարտունի—Ալաշկերտ	1975	Ռ. Գրիգորյան	Աղնիվ Պողոսյան
Սևան—Խոյ	1977	Ռ. Գրիգորյան	Սիրուշ Գրիգորյան
Կամո—Բայազետ	1976	Ռ. Գրիգորյան	

Խաղիկների համադրման աղյուսակ

I	II	III	IV	V
1. Էրթամ Քուրի դեղ	Երեմ տիկմ եղ	Էնենք ձվածեղ	ուտենք միտանդ	
2. Էթամ Ստամբուլ	Երեմ փարա բոլ	առնենք շուխամ սոլ	խաբենք զորեղոր	
3. Էրթանք Իստամբուլ	Երեմ օսկի սոլ	ընցենք էրզրոմ	առնենք շուխամ սոլ	խաբենք զորեղոր
4. Էթասեմ Հայթաղ	անեսեմ մատաղ	տանեսեմ յարիս	խասենք մուրադին	
5. Էրթամ Խոշյան	էտեսենք Միրզաշան	դառնամ Զուլա	Երեմ թթու թան	ուտա պարեն, էթա գութան
6. Էրթամ Զորագեղ	Երեմ քոս անձեղ	ճամբենք խնամուս	թրխ մեռնի բենամուս	
7. Էթամ Սևան	Երեմ իսխան	դենք զողան	թրխ ուտա իմ Շուշան	
8. Դնագինք Նորաշեն	ըլդուր կիաշեն	խորոտիկ յաշին	թափած թամաշեն	կուխող կրաշեն

Նույն ավանդական երդի. ժամանակակից տարբերակներ են № 7 և 8-ը: Այս համադրումից հետևում է նաև, որ պահպանված է երգի ավանդական ձևը և չափը, բոլոր տարբերակներում առկա է տվածական կայուն մոտիվը, և շերտավորումը ընթացել է կամ նոր մոտիվի հավելումով և կամ տեղայնացման ճանապարհով: «Գացինք»... ինչ որ տեղ—այս կայուն մոտիվը կրկնվում է բոլոր տարբերակներում, որին հաջորդում է «Երբինք»... ինչ որ բան—գարձյալ կայուն մոտիվը, այնուհետև արդեն ըստ աղագրական խմբի յուրօրինակության ավելանում է նոր գիծ՝ Վանի տարբերակում՝ բերինք օսկի բոլ, Խոյում՝ մատաղ, Անանում՝ իշխան և այլն: Ահա այս ճանապարհով

առթյունը ոչ միայն չի խանգարել բանահյուսական ինտեգրացիային, այլ ընդհակառակը, նպաստել է մոտիվների ուղղ հարաբերական կայունության, և որ տարբերայնացման պրոցեսը, ինչ որ չափով փոփոխելով բանահյուսական ստեղծագործության պատկերը, պահպանել է ավանդական երգի հատկանիշները:

Ամփոփելով, ինչ կարելի է ասել բանահյուսական ժանրերի ներկա վիճակի մասին. Գեղարքունիքում նկատվում է բանահյուսական ժանրերի կենցաղավարման երկակի գոյավիճակ, ակտիվ կենցաղավարում, երբ այս կամ այն ժանրը իր որոշակի անդր ունի աղագրական տվյալ խմբավորման կյանքում, առօրյայում, օգտա-

ղործվում է և անգամ ստեղծվում նորը: Այդպիսի ժանրերից են բանահյուսական մանր ժանրերը՝ առած-սուսցվածք, հանելուկ, խաղիկ, անեկզոս, որոշ բանաձևային աեսակներ: Այդ ևն ապացուցում նաև աղյուսակ № 1-ի տվյալները, ուր ահաիվ կենցաղավարում ապրող բանահյուսական տեսակները քանակային և սոկոսային գերակշռութուն են կաղմում: Նյութերի գրառման տոկոսային գերակշռության պակերը պակասում է համապատասխան կենցաղավարման ահաիվության նվաղման. տյսպես, հմայական բանահյուսութունը՝ աղոթք, անեծք, ղրկված է եր կենցաղավարման հենքից, ուստի և փոքր աոկոս կաղմեց Գեղարքունիքում: Բանահյուսական այնպիսի մեծածավալ ստեղծագործություններ, որպիսին են՝ հեքիաթը, ժողովրդական վեպը, ոչ միայն չեն պատմվում օգաներում, ինչպես նախկինում էր, այլև ապրում են պասսիվ կենցաղավարում, որի հեանանքով և բոնում ևն իսպառ մոռացման ուղին: Այդ են հաստատում ղարձյալ № 1 աղյուսակի տվյալները, ուր 1971—1977 թթ. գրառված բանահյուսական նյութերի կաղմում ընդհանուր քանակի 1,9% կաղմում է հեքիաթի ժանրը, այն դեպքում, երր ահաիվ կենցաղավարող բանաձևային տեսակներից առածը, գարծվածքները ընդհանուր արգյունքի 14% և 20% կաղմեցին:

Ժողովրդական վեպը 1971—1977 թթ. ընթացքում կաղմեց ղրառված նյութերի ընդհանուր քանակի ընգամենը 0,7%, այսինքն՝ մինչև 1977 թ. գրառվեց վեպի 6 պատում, իսկ 1978 թ., որր չի արտացոլված աղյուսակում, այլևս ոչ մի պատում: Հնարավոր չեղավ ղրառել 1977—1978 թթ. տվյալները խոսում են այն մասին, որ հեքիաթը ևս չի ապրում ահաիվ կենցաղավարման պրոցես Գեղարքունիքում: Տախտակում արտացոլված նյութերի քանակային պատկերում նկատվում է նըվաղման օրինաչափութուն գրեթե բոլոր տեսակներում և ղա միանգամայն համահնչյուն և օրինաչափ պետք է համարել թուլացող ավանդապա-

հոթյան և համընդհանուր ուրրանիղացիայի տյամաններում:

Մինչ 1972 թվականը վարդենիսի բանասաց Բասսո Բարսեղյանը մեծ աուղիսորիայում հեքիաթներ էր պատում: Վարդենիսի ընակչությանը Նրա մահից հետո տվելի քան 5 տարի այլևս հնարավոր չեղավ վարդենիսում նման մի դեպք արձանագրել: Նույնը և Գեղարքունիքի մյուս շրջանների համար կարելի է ասել. մինչև 1976 թ. Մարտունիում ահանատես ևնք եղել բանասաց-հեքիաթասաց Գեղամ Ավետիսյանի բաւմամարգ ունկնդիրների աուղիսորիային: Նրա մահով (1976 թ.) տյլևս նման ավանդական սոկոկորութի չհանդիպեցինք Մարտունիում: Այսպիսով, բանահյուսական ժանրի որոշ տեսակների ահաիվ կենցաղավարումը բոնել է մոռացման ճանապարհը և բանասացի մահով մոռացվում է սոկոկորութը, իսկ այդ ճանապարհով էլ նաև կորուստի է մասնվում ժանրը:

Այս երեույթը բացատրվում է հասարակա-կոն-տեստեսական կյանքի խոշոր առաջընթացով, աոքյա կյանք ներթափանցած ախնիկայի նվաճումներով, նախկին հեքիաթասացի փոխարեն այժմ մարդիկ հաճույքով նայում են հաուսատեսային հաղսրղումները, հաճախում կինո, թաարոն կամ վյուդական ահումրներ: Նյութաուերինիկական աուսըընթացի և նվաճումների այս միջտվայրում ընականորեն պետք է որ թուլանային տղղային ավանդական շատ սոկոկորութներ ու միջոցաոումներ: Ներկայումս Գեղարքունիքում չկա այնպիսի մի բնակավայր, որ չունենա իր գյուղական ահումրը, կինոն և թատրոնը: Բարձրացել է նաև գյուղի սոցիալ-անաեսական, մշակութային կերղարը, անգրաղիտությունը վերացված է: Գիաակցելով ուսման առմեքը, աճող սերունդը ձգտում է գրաղիաության և ընթերցասեր է, հպարտանում է գիաության մեղիը հայրենակիցների մասնակցությամը, իսկ անցյալի ավանդութներին վերարերվում է մեծ հարգանքով ու պատակաոանքով: